

Մանր գիտելիք :

Չինացի և Հնդկաստանյան աւելորդագործութիւնը
լուսնին վրայ :

Հնդկները կը հաւատան թէ լուսնին մէջ նա-
պաստակ մը կայ :

Չինացիք ալ երբոր լուսնին սկաւառակը կը
նկարեն՝ կեդրոնը կը ձեւազոնեն նապաստակ մը որ
բրինձ կը ծեծէ :

Այս անտեղի սովորութեան պատճառն է ա-
ռասպել մը, որ Հնդկներէն Չինացի անցեր է :

Վարանասի (Պենարէսի) թագաւորութեան
մէջ, Դիւցազին ըսուած շամբին մօտ անտառի մը
մէջ կրօնական յիշատակարան մը կայ զոր կ'անուա-
նեն երեք չորքոտանեաց Սթուփա :

Այն անտառին մէջ, կ'ըսեն, երեք կենդանիք,
աղուէս մը, կապիկ մը և նապաստակ մը բարեկա-
մաբար կ'ապրէին :

Օր մը աստուածոց հայրը երեցաւ անոնց, աղ-
քատ ծերու մը կերպարանքով և ըսաւ :

— Որդեակք իմ, գոհ էք այս հանգարտ և ա-
ռանձնացեալ տեղէս. ամենևին վախ մը չէք զգար :

— Թաւ խոտերու վրայ կը կոխենք, պատաս-
խանեցին, խիտ անտառին մէջ կը պտըտինք և թէ-
պէտ տեսակով տարբեր ենք, բայց կը զուարճա-
նանք միատեղ, վերջապէս խաղաղ և հանգիստ
եմք :

— Ես ալ այս բանս լսած էի, պատասխանեց
ծերունին, և ասոր համար մոռնալով իմ տարիքիս
ծանրութիւնը՝ հեռու տեղերէ ելայ եկայ զձեզ
տեսնելու : Բայց հիմա շատ անօթի եմ, կրնաք
ինծի քիչ մը ուտելու բան տալ :

Մէկէն իրեք չորքոտանիքն գլծով շարժած, վա-
զեցին մէկ մէկ գի իրեն կերակուր փնտռելու :

Աղուէսը գետի մը եզրէք պտրտելով յափշտա-
կեց արծաթափայլ թարմ ձուկ մը և խածած բե-
րաւ :

Կապիկը ծառերուն վրայ ելաւ և գեղեցիկ ծա-
ղիկներ և համեղ պտուղներ ժողվեց :

Միայն նապաստակը դարձաւ ինչպէս որ գնաց
և բան մը չգտաւ ծերուն ընծայելու :

Այն ատեն ծերունին ըսաւ տրամուլթեամբ .
Կապիկն ու աղուէսն իմ վրաս խղճացին . ինչո՞ւ
նապաստակն այսպէս զիս երեսէ ձգեց :

Նապաստակն այս յանդիմանութիւնը լսելով
ըսաւ աղուէսին և կապիկին . Բարեկամք իմ, դիզե-
ցէք հոս տեղս չորցած ճիւղեր և տերևներ, և
տեսնէք թէ ինչ կը մտածեմ :

Երբոր ճիւղերը և տերևները դիզեցին՝ նապաս-
տակը կրակ ձգեց մէջը և ըսաւ . Աղիւս ծերունի,
ես պզտի ու տկար կենդանի մ' եմ, փնտռեցի և

չգտայ արժանի բան մը որ քեզի բերեմ. բայց կը
համարձակիմ քեզի կերակուր մատուցանելու իմ
մարմինս :

Այս ըսելով կրակին մէջ ցաղքեց և մեռաւ :

Այն ատեն չաստուածն իր ճշմարիտ կերպա-
րանքը առնելով, ժողովեց նապաստակին ոսկորնե-
րը և ցաւալի հառաչանքով մը ըսաւ աղուէսին և
կապիկին : Այս զոհը ինծի շատ սրտաշարժ է, և
փոխարէն անոր՝ զինքը լուսնին սկաւառակին մէջ
պիտի գնեմ, որպէս զի յիշատակը յաւիտեան մնայ :

Վիճակագրութիւն Լեւորայի տնտեսարան . — Համ-
բաւաւոր Անգղիացի վիճակագիրը Ֆորպէս Ուինս-
լու աս մօտերս անաչառ քննութեամբ տեսու-
թիւն մը ընելով Լոնտրայի մէջ գտնուած ամէն
տեսակ ակտաւորաց վրայ, կ'ըսէ թէ՝ ամէն տարի
10,000 տղայք կանոնաւորեալ կերպով և առան-
ձինն ջանիւք ախտի կը վարժեցուին : Իրեն գրած
ցուցակին համեմատ 50,000 միայն գող կայ, և
5,000 գողակից . 15,000 ստակով խաղացող, ի-
բրեւ արհեստ մը . 25,000 մուրացկան, որոնք նաև
ըստ տեղւոյն մանր գողութիւններ ալ կ'ընեն .
300,000 գինեմուլք . 180,900 օղիասէրք հանապա-
զօրեայք . 150,000 մ' ալ անկարգ կենաց ետեւէ
եղողք : Աս հաշուիս համեմատ Լոնտրայի բնակ-
չաց գրեթէ երեքին մէկը այսպիսի անբանական
ախտով մը բռնուած է . ուստի Սուս անգլիական
օրագիրը՝ որ աս ցուցակս կը հրատարակէ, հա-
ռաչելով մը կը գոչէ . “ Ո՛հ, ինչ մաքուր քաղաք
է Լոնտրա ,” :

Հնդկաստանի քարածոսութիւնն ու բնակչոյ թիւը . —
Անգղիացւոց պաշտպանութեան ու ձեռքին տակը
եղած երկիրներուն տարածութիւնն է 1,468,331
մղոն քառակուսի, որոնց միահամուռ բնակիչն է
180,367,148 հոգի :

Անգղիացւոցմէ ետքը Լուսիտանացիք 1,558 մլ-
ղոն քառակուսի երկիր ունին, որոնց բնակիչն է
408,596 : Գաղղիացիք 189 մղոն քառակուսի եր-
կիր ունին 197,863 բնակչօք : Եւրոպացւոց կա-
լուածներէն գուրս կան քանի մը ազատ տէրու-
թիւններ ալ՝ որոնց բովանդակ երկրին տարածու-
թիւնն է 69,714 մղոն քառակուսի, և 3,692,000
բնակիչք :

Արդ աս հաշուիս համեմատ բովանդակ Հընդ-
կաստանի տարածութիւնը կ'ըլլայ 1,536,800 մլ-
ղոն քառակուսի . և բնակիչը 184,665,607 :